ԿՐՈՆԸԿԸՆ

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ՝ 1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

«Կա ժամանակ ծնանելոյ, եւ ժամանակ մեռանելոյ...
ժամանակ քակելոյ եւ ժամանակ շինելոյ,
ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ...»:
(ԺՈՂՈՎՈՂ Գ 1-3)

Այս զանգերի ձայնը, որ լսում եք, սիրելի հավատացյալներ, մեզ հիշեցնում է տասը տարիներ առաջ, ճիշտ նույն այս ժամին, Հայաստանի հյուսիսային մասում տեղի ունեցած ահավոր երկրաշարժը, որ մի քանի րոպեների ընթացքում հազարավոր տներ քանդեց, հազարավոր կյանքեր խլեց: Տասը երկա՞ր ու «կարճ» տարիներ, ինչե՞ր ասեք չկատարվեցին աշխարհում այդ ընթացքում՝ կառավարություններ փոխվեցին, երկրաշարժեր, մրրիկներ եղան, միլիոնավոր մարդիկ մահացան: Սակայն ինչո՞ւ ենք հիշում այս օրը, այն էլ՝ տասը տարիներ հետո: Այս հարյուրամյակը մեր ժողովրդի պատմության մեջ երևի ամենախավար շրջաններից է՝ լեցուն հույզերով ու ահավոր ողբերգություններով: Մեր պատմության մեջ, մոնղոլ-թաթարական շրջանից այն կողմ, որևէ ժամանակահատված հնարավոր չէ հիշել, որ լինի այսքան հակասություններով լի, որ մեր ժողովուրդը այսքան արյունաքամ եղած լինի: 1895 թ. Սասունի ջարդերը, Կիլիկիո, Ադանայի ջարդերը և ապա Մեծ եղեռնը, երբ կորցրինք մեր երկրի ու ժողովրդի կեսից ավելին, այնուհետև՝ սովետների «մաքրագործման» շրջանը և տակավին՝ երկրորդ համաշխարհային պատերազմը, որտեղ միայն հայ ժողովուրդը ավելի քան 325000 զոհ տվեց, այնքան, ինչքան ԱՄՆ-ը:

Տեր Աստված, մի՞թե այս փոքրիկ ժողովրդի համար այսքանը քիչ էր, որ երկրաշարժն էլ պիտի զարկեր: Մեռնողները մեռան, սակայն կյանքը պետք է շարունակվեր: Այդ մի քանի րոպեների ընթացքում որքան հայորդիների ձայներ բարձրացան առ Աստված՝ ողորմություն և գթություն հայցելով Երկնավորից: Բոլորս տեսանք, թե ինչպես այս ողբերգությունը համախմբեց ողջ մարդկությանը, և ամեն կողմից եկան, օգնության ձեռք մեկնեցին, եկան՝ կարեկցելու, զորավիգ կանգնելու մեզ այդ դժվարին պահերին: Այս բոլորի համար, իհարկե, մենք շնորհակալ ենք: Սակայն տասը տարիներ են անցել, բայց ի՞նչ է փոխվել: Մեզանից յուրաքանչյուրն արեց ամեն ինչ՞ թե՞ հոգեպես և

թե՛ ֆիզիկապես զորավիգ լինելու այդ ահավոր աղետից տուժածներին, նրանք, ովքեր մեռան՝ մեռան, գնացին, խոսքը վերաբերում է նրանց, ովքեր ողջ մնացին: Տասը տարիներ են անցել, սակայն դեռ վերքը չի ապաքինվել: Որքան էլ օգնեն մեզ, մեր տունը մենք պիտի շինենք, մեր ուժերով պիտի կառուցենք: Այսօր, սիրելի հավատացյալներ, մենք պետք է համախմբվենք, ինքներս մեզ գտնենք, չպետք է հուսահատվենք՝ ասելով, թե ինչ կարող ենք անել այսքան տառապանքի, չարիքի առջև: Մեր նախնիները մեզ համար աղոթեցին՝ Սուրբ Գրիգորները՝ Լուսավորիչը, Նարեկացին, Տաթևացին, աղոթեցին ոչ միայն իրենց ժամանակի ժողովրդի համար, այլ նաև մեզ համար աղոթեցին: Իրենք մոմ դարձան՝ լուսավորելու համար մեր ժամանակը, որպեսզի մեր կյանքի ճանապարհին լուսավորվել կարողանանք իրենցից բխող լույսով:

Մեր շուրջը շատ են թշնամիները՝ թե՛ արտաքին և թե՛ ներքին, ովքեր աշխատում են ամեն կերպ խավարի մեջ ձգել մեզ: Սակայն մեզանից յուրաքանչյուրի առաջին պարտավորությունը հայ քրիստոնյա լինելու հանգամանքի գիտակցումն է: Հազար-հազարներ մեռան, որպեսզի այսօր մենք ապրենք, գոյություն ունենանք, որպեսզի շարունակենք իրենց կիսատ թողած գործը: Եթե կարողանանք այդ ապրումը, այդ հոգևոր թռիչքն ունենալ, զգալ մեր նախորդների բյուրավոր այդ բանակը, հավատացե՛ք, որ ոչ մեկ ուժ մեզ չի կարող տապալել, և հանգիստ սրտով կարող ենք ավետարանչի խոսքերով ասել. «Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո, ո՞ւր է, դժոխք, խայթոց քո» (Ա Կորնթ. ժե 55): Մենք որ մահից չվախենանք, մեզ այլևս ոչնչով վախեցնել չեն կարող: Սակայն այդ հոգեվիճակն ունենալու համար պետք է աղոթել կարողանանք, պետք է հետևել կարողանանք մեր հայրերի սուրբ ճանապարհին: Մեր աղոթքները վեր առաքենք առ Աստված՝ խնդրելով Նրանից, որպեսզի այս աղետը վերջինը լինի մեր պատմության մեջ, ամեն: